ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԱՌԹԻՎ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ը ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Պ. ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՏԱՑԵԼ Է ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐ-ՀԸՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Պ. Ի. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՌԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
Վ Ա Զ Գ Ե Ն Ա.

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐ ԲՈՒԼԳԱՆԻՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՀՂԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԾԱՆՈՒՑՎԱԾ Է ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԸՆԿԵՐ ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ։ ԻՆՁ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ Է ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԵԼ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ՝ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ԵՍ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՄ ՏՎՅԱԼ ՀԵՌԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ։

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՊՈԼՅԱՆՍԿԻ**։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Պ. ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՍՈՒՅՆ ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԱՆՁԱՄԲ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱ-ՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒ-ԹՅԱՆԸ ՀՂԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԻ ԱՌԹԻՎ։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ